

## ԸՆԴԴԻՄԱՆՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

### ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՎԻՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ» ԽՈՐԱԳՐՈՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զապել Եսայանի գրական ժառանգության շուրջ եղած առանձին հողվածները, ուսումնասիրությունները, մենագրությունները շատ են ու տարաբնույթ, սակայն դրանք ամբողջական և լիարժեք պատկերացում չեն ստեղծում այն առումով, որ հեղինակի երկերը դեռևս համապարփակ ուսումնասիրության չեն ենթարկվել:

Գրական և գիտական մամուլում հանդիպում ենք նաև որոշ գրողների և գրականագետների վերլուծությունների, որոնցում փորձ է արվում գիտական քննության ենթարկել թե՛ տվյալ ժամանակաշրջանը, որում ապրել և ստեղծագործել է Զապել Եսայանը, և թե՛ նրա ստեղծագործության զարգացման բնականոն օրինաչափությունները, ուղիները, ևն:

Զապել Եսայանը քնարական երևույթ չէ, ուստի անհրաժեշտ է, որ նրա երկերը վերլուծող-հետազոտողը ոչ միայն ամբողջապես տիրապետի և խորապես կարդա դրանք, այլև իմանա ժամանակի գրողական, գրական-մտավորական և պատմա-քաղաքական միջավայրերում տեղի ունեցած փոփոխությունները, ուսումնասիրի մամուլը, հարակից գեղարվեստական և գիտական գրականությունը: Այս առումով, Աննա Սարգսյանի «Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Զապել Եսայանի վիպագրության մեջ» խորագրով ատենախոսությունը ոչ միայն Եսայանի ստեղծագործությունը մտավորականության գեղարվեստական քննության համատիրությամբ արժևորելու առաջին համապարփակ և ամբողջական փորձ է, այլև խնդրի լուծման տարբեր ճանապարհների որոնում է, որոնք ատենախոսության հեղինակը կարողացել է համակարգել և հավաքել մեկ առանցքի շուրջ:

Ուսումնասիրությունը կատարելիս ատենախոսության հեղինակը փորձել է պատասխանել՝ զոյություն ունե՞ն արդյոք *ճշմարիտ մտավորական և կեղծ մտավորական* սահմանումները, հարցին, («Սպասման սրահին մեջ», «Կեղծ

հանճարներ», «Հլուները և ըմբեստները», «Հոգիս արքայալ»), և թե որքանով են այդ սահմանումները առնչվում Ջապել Եսայանի գրականությանը՝ միաժամանակ դիտակետում պահելով կերպարների նախատիպերը (Տաճատ Չարըքյան-Տիրան Չրաքյան, Սուրեն Սահակյան-Սուրեն Պարթևյան, Անտոն Յարայան-Միամանթոն և այլք):

Իր դիտարկումների արդյունքում ատենախոսը արդարացիորեն գտնում է, որ Ջապել Եսայանը *մտավորական-միջավայր* բախումների կառուցման տիրույթում ուրույն տեղ է հատկացրել և սիրո թեմային, որտեղ իրենց պատկերումն են ստացել մի շարք մտավորական կերպարներ («Արգելքը», «Վերջին բաժակը»):

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը Ջապել Եսայանի արձակն է, առարկան՝ ժամանակի մտավորականության նկարագիրը քննության ենթարկելը:

Ատենախոսը մշակել և ընդլայնել է գրական և գրականագիտական ընթերցումների տարածությունը և կետային-թիրախային հղումների միջակայքը համալրել է լայն ճանաչում ունեցող գրողների, քննադատների, տեսաբանների երկերով և աշխատություններով: Ուշագրավ է նաև, որ Աննա Մարգարյանը քաջաձանթ է արևմտահայ գրականության զարգացման ուղուն և այդ ուղին մեկնելու փորձեր կատարած բոլոր գրականագետներին:

Ատենախոսությունը *արդիական է* նրանով, որ Ջապել Եսայանի արձակը ներկայացվել է որպես առանձին, ավարտուն համակարգ (հեղինակի անցած ճանապարհը, որոնումները, մտավորական շրջանակների հետ փոխհարաբերությունները, կայացման ընթացքը և այլն), ինչպես նաև շղթայական անդրադարձով նորովի է քննվել մտավորականության կերպարը վիպագրության մեջ: Ատենախոսության *գործնական նշանակությունը* ապահովում է նաև դրա արդյունքի հնարավոր կիրառությունը հատուկ դասընթացների ընթացքում, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզեր գրելու ժամանակ:

Բացահայտվել է Եսայանի արձակի տեղը 20-րդ դարասկզբի գրական-գեղարվեստական զարգացումների համապատկերում, ներկայացվել է հեղինակի

ժառանգության մշակութաբանական արժեքը՝ ընդհանուր պատկերացում տալով նաև արևմտահայ մտավորական շրջանակների վերաբերյալ:

Ատենախոսության *գիտական նորույթը* բխում է հետազոտության միջոցով իրացված մտավորականության քննության հիմնագաղափարից և դրան առնչվող մի շարք դրույթներից: Հանգամանալից, հստակ և հասկանալի ձևակերպված են նաև ուսումնասիրության *նպատակը* (վիպագրության մեջ ներկայացված կերպարների համակողմանի վերլուծություն), որին հասնելու համար առաջադրվել են *խնդիրներ*: *Խնդիրները* լուծելու ճանապարհին ատենախոսը ուղղորդվել է հատուկ ընդգծված մեթոդաբանության միջոցով, որը իրացնելու նպատակով կիրառվել են *վերացարկման, վերլուծական, համադրման, համեմատական*, ևն մեթոդները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության երկրորդ գլուխը ներառում է նաև ենթագլուխներ: Ատենախոսության բոլոր երեք գլուխներում հեղինակը փորձել է պահպանել ժամանակագրական զարգացումների միտումը՝ վերլուծության առանցքում ունենալով թեմատիկ բաժանումը:

Ատենախոսության առաջին գլուխը հեղինակը վերնագրել է «20-րդ դարասկզբի ուսանող մտավորականության նկարագիրը»: Այստեղ ատենախոսը անդրադարձել է «Սպասման սրահին մեջ» և «Կեղծ հանճարներ» վեպերին և դրանցում մտավորական շրջանակների նկարագրերի ուսումնասիրմանը:

«Մտավորական-միջավայր փոխառնչությունների քննության փորձ» խորագրի ներքո ատենախոսը վերլուծել է երկրորդ գլուխը: Այս գլխում նա մեկնաբանել է գրողի վերաբերմունքը կրթության, դաստիարակության, ազգի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի շուրջ («Մկյուտարի վերջալույսներ», «Հլուները և ըմբոստները», «Հոգիս արքայալ»):

Երրորդ գլուխը վերնագրել է «Գրողի քաղաքական նոր ընթրնումների անդրադարձը», և այստեղ վերլուծվել են ազգային-ազատագրական պայքարի

կողմնակից Ջապել Եսայանի քաղաքական կողմնորոշումները («Նահանջող ուժերը», «Բարպա Խաչիկ»):

Որպես ատենախոսի առավելություն նշենք նրա *գիտական բարեխղճության* մասին, որը նա դրսևորել է գրական երևույթները համապատասխան գլուխներում ու ենթագլուխներում դասակարգելու և դրանք դիպուկ վերնագրելու հմտություններում: Նրա գիտական բարեխղճության վկայությունն են նաև ատենախոսության տրամաբանված ու անթերի կառուցվածքը, շարադրանքի հստակությունը, անխոցելի գրագիտությունը, գրական երևույթների ինքնուրույն բանաձևումները և թիրախային մտահանգումները, որոնք առավել տեսանելի են եզրակացություններում:

Աշխատանքում նկատելի են ոչ միայն գրականագիտական, այլև Եսայանի անձնային և մտավորական շրջանակների հետ փոխհարաբերությունները ընդգրկող փաստերի առատությունը, փաստեր, որոնցից շատերը գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

«Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Ջապել Եսայանի վիպագրության մեջ» խորագրով ատենախոսության հեղինակ Աննա Սարգսյանը իր մեկնաբանությունները իրականացնելիս հենվում է Սևակ Արզումանյանի, Էդվարդ Ջրբաշյանի, Սուրեն Դանիելյանի, Գրիգոր Պըլտյանի, Մարկ Նշանյանի, Ժենյա Քալանթարյանի, Ջավեն Ավետիսյանի, Հակոբ Օշականի և այլ հեղինակների տեսական և գրականագիտական հիմնավորումների վրա՝ դրանց համապատկերում քննելով Ջապել Եսայանի՝ որպես կին հեղինակի, գեղագիտական հղումները և ատենախոսության հիմնագաղափարը՝ իբրև մտավորականության գեղարվեստական քննության փորձ: Այս համապատկերում Աննա Սարգսյանը ընթացել է ճիշտ ուղղությամբ՝ ի մի բերելով և մեկ աշխատության շրջանակում համակարգելով տեսական-գրականագիտական ներհայաստանյան միտքը: Ատենախոսության մեջ միջազգային տեսաբանական փորձի և մտքի անսպառ պաշարներից օգտվելու և ասելիքը հիմնավորելու կարևորությունը և անհրաժեշտությունը հեղինակը իրացրել է տարբեր երկրներում բնակվող սփյուռքահայ տեսաբան-գրականագետների միջոցով:

Ուշագրավ են նաև Աննա Սարգսյանի առանձին դիրքորոշումները հանրահայտ կոնցեպտների շուրջ, ինչը ողջունելի է: Այսպես, ատենախոսության երկրորդ գլխում, «Հայրենասիրությունն իբրև գաղափար և վարքագիծ» ենթախորագրի ներքո ատենախոսը փորձել է մեկնաբանել նաև *հայրենասիրություն* կոնցեպտի հիմնագաղափարը՝ առանձնահատուկ վերաբերմունքով վերլուծելով այն գաղափարաբանական հենքի վրա հիմնված վարքագծի իրացման տեսանկյունից («Սկյուտարի վերջալույսներ», «Հլուները և ըմբոսները»):

Ատենախոսը ձգտել է ընդլայնել նաև իր հարցադրումների շրջանակները՝ գեղագիտական խնդիրներից մինչև Եսայանի արձակի արվեստի առանձնահատկությունները, առաջադեմ մտավորականի սիրո ընկալումներից մինչև անդրադարձ քաղաքական նոր ըմբռնումների: Բացահայտել է մտավորականի ներհայեցման ուղին, որպես ընթերցող կարողացել է ներթափանցել հեղինակի աշխարհընկալման տիրույթները, տեսնել իրական արվեստագետին և մտավորականին, ճանաչել և գնահատել նրան, ինչպես դա արել է Եսայանը «Հոգիս արքորյալ» վիպակում: Կերպարակերտման առանձնահատկությունների միջոցով ատենախոսը բացահայտել է նաև մտավորականի կերպարի նոր դրսևորումները, Եսայանի երկերի առանձին էջերը դարձնելով 20-րդ դարասկզբի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական զարգացումների բարդ հանգույցներում հայտնված գրական մի ողջ սերնդի դիմանկարի ամբողջացման միջոց: Այս համատեքստում, նշենք, որ Ջապել Եսայանի երկերում մտավորականի կերպարը 20-րդ դարի սոցիալ-հասարակական, բարոյահոգեբանական և պատմա-քաղաքական բարդ հանգույցներում հայտնված անհատն է, ում աշխարհատեսությունը չափելի չէ մակընթացություններով և տեղատվություններով լի ժամանակում:

Աննա Սարգսյանը անդրադարձել է նաև Եսայանի ինքնակենսագրական վեպին՝ «Միլիհտարի պարտեզների», որում, ըստ նրա՝ «մեկ այլ դիտանկյունից է արտացոլվում հեղինակի «հայրենաբաղձությունը» և գրված է «վարպետ գրչով» (էջ 98):

«Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Ջապել Եսայանի վիպագրության մեջ» խորագրով ատենախոսության լեզուն *գիտական* է, հասկանալի ու հասանելի է ընթերցողին: Աշխատանքը *բովանդակային* է և *ավարտուն*: Առաջադրված *գիտական նորույթը* համապատասխանում է *արդի գիտական չափանիշներին*: Մանրամասն ուսումնասիրված են թեման ընդգրկող գեղարվեստական գրականությունը, մամուլը, տեսաբանությունը, հարակից նյութերը:

Աննա Սարգսյանի «Մտավորականության գեղարվեստական քննության փորձը Ջապել Եսայանի վիպագրության մեջ» խորագրով ատենախոսությունը հետաքրքիր է իր *նյութով, մեթոդաբանությամբ, գաղափարը արդիական* է: Այս իմաստով ատենախոսությունը լիովին համապատասխանում է Ժ.01.02. «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտական թվանիշին, և մեր կողմից երաշխավորվում է պաշտպանության:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Նաիրա Համբարձումյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Սփյուռքահայ գրականության  
բաժնի ավագ գիտաշխատող

Նաիրա Համբարձումյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Ժ/պ,

Բանասիրական գիտությունների թեկնածու,  Հերիքնագ Ռոսկանյան

05.06.2023

